ՍԱՂՄՈՍ 15

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Սիոնի քաղաքացու նկարագրությունը MT նախաբան «Դավթի սաղմոսը»	Այն մարդկանց բնավորությունը, ովքեր կարող են բնակվել Տիրոջ հետ	Պատարագ տաճար մտնելու համար	Ինչ է Աստված պահանջում	Յահվեի հյուրը
15:1-5	15:1	15:1	15:1	15:1
	15:2-5բ	15:2-5բ	15:2-5բ	15:2-3ա
				15:3բ-4բ
				15:4գ-5
	15:5գ	15:5գ	15:5գ	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 15:1-5
[1]ՏԵ՛Ր, ո՞վ է մնալու Քո վրանում,
Ո՞վ է բնակվելու Քո սուրբ լեռան վրա:
[2]Նա, ով ուղղությամբ է քայլում ու արդարություն է գործում
Եվ իր սրտում ճշմարտությունն է ասում:
[3]Նա, ով լեզվով չի զրպարտում,
Ընկերոջը չարիք չի պատճառում
Եվ իր դրացու վրա նախատինք չի գցում,
[4]Ում առջև չարագործն անարգված է,
Իսկ աստվածավախներին պատիվ է տալիս,
Երդվում է ի վնաս իրեն ու հետ չի կանգնում.

[5]Իր դրամը վաշխով չի տալիս
Ու անմեղի դեմ կաշառք չի վերցնում:
Ով այսպես է վարվում, հավիտյան չի սասանվի:

15:1 «ՏԵՐԸ» Սա Աստծո ուխտի անունն է Եբրայերեն «լինել» ԲԱՅԻՑ: Տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ:</u>

❖ **«ով»** Համարը 1-ը հարց է, որը կարող է լինել տեքստային նշանաբան այնպիսի պատարագի համար, որը գործածվում է այն մարդկանց համար, ովքեր տոնական օրերին մտնում են տաճար:

❖ **«Քո վրանը... Քո սուրբ սարը»** Սրանք զուգահեռներ են, որը նշանակությունները նաև ԲԱՅԵՐ են («մնալ» և «բնակվել»): ՅԱՀՎԵԻ տաճարում մշտապես լինելու գաղափարը (տես՝ Սաղմ. 23:6բ) Աստծո հետ հավիտենական փոխհարաբերություն է, որը՝

1. տևում է այս կյանքից հետո էլ
2. ներառում է մտերմություն
3. ունի ամենօրյա նվիրում

Սաղմոս 27:4-6 արտահայտում է այս նույն միտքը ոչ այլաբանական իմաստով (այսինքն՝ «իմ կյանքի բոլոր օրերում», տես՝ Սաղմ. 23:6ա):

Նաև ուշադրություն դարձրեք, որ Սաղմ. 5:4բ-ում «չարը Քեզ մոտ /ՅԱՀՎԵԻ մոտ/ չի բնակվելու», սակայն հավատարիմ հետևորդը ցանկանում է ապրել Աստծո հետ (տես՝ Սաղմ. 61:4, 84:10):

15:2-5 Այս համարները նկարագրում են (հավասարակշռված դրական և բացասական հատկանիշները) այնպիսի մարդու տեսակ, որը կբնակվի Աստծո հետ (տես՝ Սաղմ. 24:3-6):

1. ուղղությամբ է քայլում («անարատությամբ», BDB 1071, տես՝ Սաղմ. 18:23, 32, 119:80, Առակ. 28:18):
2. արդարություն է գործում
3. ճշմարտություն է խոսում (տես՝ <u>Հատուկ Թեմա. Հավատալ, վստահել, հավատք և հավատարմություն ՀԿ-ում</u>) իր սրտում
4. լեզվով չի զրպարտում
5. իր դրացուն չարիք չի պատճառում
6. իր ընկերոջ վրա նախատինք չի գցում
7. անարգում է չարագործին
8. պատվում է աստվածավախներին
9. երդվում է ճշմարտության համար (այսինքն՝ ուխտ, երդում, տես՝ Ղևտացիների 27)
10. ետ չի կանգնում (չի ուրանում երդումը իր շահի համար)
11. իր դրամը վաշխով՝ շահույթով չի տալիս (տես՝ Ելից 22:25, Ղևտ. 25:36)
12. անմեղի դեմ կաշառք չի վերցնում (տես՝ Ելից 23:8, 2 Օր. 16:19)

Ուշադրություն դարձրե՛ք, որ բոլոր այս առանձնահատկությունները նկարագրում են, թե ինչպես է աստվածավախ մարդը ապրում և վերաբերվում ուրիշների հետ: Ճանաչել Աստծուն նշանակում է հարգել մարդկանց: Հավատարիմ հետևորդները պետք է ապրեն և սիրեն, որպեսզի աշխարհը հասնի Արարիչ Աստծո ճանաչողությանն ու ընդօրինակմանը:

15:4բ «աստվածավախները» Սա հավատարիմ հետևորդների պարբերաբար կրկնվող նկարագրությունն է (տես՝ Սաղմ. 25:12,14, 103:11,13, 118:4): Դրանք նկարագրվում են մի քանի կերպ՝

1. Ինչ են նրանք անում՝
   ա. փառաբանում են, մեծարում և կանգնում ՅԱՀՎԵԻ երկյուղի մեջ, Սաղմ. 22:23
   բ. քայլում են Նրա ճանապարհներում, Սաղմ. 128:1
2. Ինչ է Նա անում նրանց համար՝
   ա. բացատրում է Իր ուխտը, Սաղմ. 25:14
   բ. փրկությունը մոտեցնում է, Սաղմ. 85:9

գ. նրանց օգնությունն է ու վահանը, Սաղմ. 115:11
դ. օրհնում է նրանց, Սաղմ. 115:13, 128:1

15:5գ Սա ամփոփիչ հայտարարություն է: Նրանք, ովքեր ապրում են Աստծո և իրենց եղբայրների, քույրերի հետ ուխտի մեջ, երբեք չեն սասանվի (BDB 556, KB 555, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 17:5, 30:6, Առակ. 10:30, 12:3): TEV թարգմանում է այն որպես «միշտ ապահով կլինեն»: Եսայի 33:15 կարծես թե զուգահեռներ է անցկացնում այն մարդկանց փառավորման հետ, որոնք կարող են մոտենալ և բնակվել ՅԱՀՎԵԻ հետ: Եթե այդպես է, ապա Ես. 33:16-ը զուգահեռ է Սաղմ. 15:5գ-ին:

Փրկության նպատակը միայն անհատական թիրախավորումը չէ, այլ հասարակական: Աստծո հանդեպ սերը պետք է դառնա մեկը մյուսին հանդեպ տածած սիրո հետևանք: Մենք պետք է առանձնացնենք արդարացումը արդարությունից: Ծննդոց 3-ի անկումը ազդեց ամբողջ մարդկության վրա (տես՝ Սաղմ. 14:1-3): Աստծո պատկերը (տես՝ Ծնն. 1:26-27) մարդկության մեջ ապականվեց: Մարդկությունը դարձավ դեպի ներս՝ իր կողմը: Այժմ եսասիրությունն ու անկախությունն են հատկանշական նրանց մտքերին և գործողություններին: Աստծո հետ նոր հանդիպումը փոխում է այս ուղղությունը (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:25-27): Նոր անձը դարձյալ ունի կախվածության զգացում: Նա ապրում է Աստծո և ուրիշների համար:

❖ **«երբեք»** Տե՛ս Հատուկ Թեմա. Հավիտյան:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նկարագրե՛ք այն անձին, որը կարող է մոտենալ ՅԱՀՎԵԻՆ տաճարի մեջ:
2. Ինչպե՞ս է «ապրելակերպ դարձած հավատքը» կապված փրկարար հավատքի հետ:
3. Թվարկե՛ք հավատարիմ հետևորդի հինգ դրական և բացասական հատկանիշները:
4. Արդյո՞ք այս սաղմոսը ակնարկում է, որ արդար անձը երբեք չի չարչարվելու: